# ԴԱՍԱԳԻՐՔ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅՈՑ


ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա. ԹԱՇՃԵԱՆ

Կ. ՊՈԼՍԵՑԻ.



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԳ — 1874

781
Ե-23

ԴԱՍԱԳԻՐՔ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅՈՑ

2004

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ Մ. ԹԱՇՃԵԱՆՑ

Կ. ՊՕԼՍԵՑԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԳ—1874

24266-Կ.Հ

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ԳէՈՐԳԵԱՅ Դ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ·

3436-55

2054
40

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա· ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

# Տ· Տ· ԳԷՈՐԳԵԱՅ Դ·

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ·

Printed in Turkey

# ՆԱԽԵՐԳԱՆՔ.

---

Գեղեցիկ զգացմանց արտայայտութիւն կպատկերանայ արտաքին զուգեւանդ եւ գործնական արդեանց վերայ՝:

Ո՛վ որ չունի զգացում՝ նա զուրկ է կենդանութենէ եւ Աստուծոյ պարգեւած բարի եւ գերագոյն յատկութիւններէն:

Սակայն ամեն զգացում՝ եթէ բարեկիրթ եռանդ եւ հոգեւէր խնամօք եւ ճաշակով դաստիարակուած եւ զարգացած չէ՝ ի բարին դիմել կդժուարանայ:

Չկայ ուրեմն այլ միջոց՝ զի անկիրթ զգացումն անգամ՝ առանց դաստիարակութեան բովէն անցնելոյ՝ հրապուրէ եւ ոգեւորէ հետեւիլ ի բարիս:

Ահաւասիկ Ձայնագրութեան կամ Երաժշտութեան արհեստ՝ որ խիպառ անկիրթ եւ քարացեալ սրտերն անգամ գիտէ դիւթել եւ շարժել ի գրգիռ, որոյ թէպէտ սակաւատեւ՝ այլ քաղցր՝ ներդաշնակ եւ ներհուն մի հնչիւն անգամ կարող է եւ անշուշտ կյաջողի մի քաջ եւ ճարտասան ատենաբանի երկարատեւ խօսքերէն առաւել արագ եւ ազդու տպաւորութիւնը հրապուրիչ ելեքտրականութեամբ ներգործել ամեն կարգի՝ աստիճանի եւ ճաշակի ունկնդրաց զգացմանց վերայ եւ անդէն բաղձացեալ եւ ակնկալեալ արդիւնքը կգրաւէ:

Ուստի Եկեղեցիք Հայաստանեայց՝ ինչպէս նա եւ համայն Քրիստոնէից՝ խորին ուշադրութիւն տալով երաժշտութեան՝ զայն նա եւ Աստուածպաշտութեան հետ լծորդել՝ եւս ձայնագրութեամբ հաստատենել եւ ապահովել ջանացին, եւ կջանան ցարդ նմին օրինաւոր ուղղութիւն եւ ճոխութիւն հաղորդել եւ այլ եւ այլ կանոնաց ներքեւ հետզհետէ առաւել եւս ազդու կերպիւ բարեկարգել:

Այսու ամենայնիւ երաժշտութեան եւ ձայնագրութեան այս արհեստ ներկայ դարուս մէջ ի Հայս անձուկ շրջանի մէջ պարփակուած

էր եւ վերին պաշտպանութեան կկարօտէր ընդհանրածաւալ փայլելոյ եւ եկեղեցական Շարականքը եւ երգերը եւս նորօք ի լոյս տալոյ համար:

Ահաւասիկ այս ՎԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ Հայաստանեայց Եկեղեցւոյ Գլխոյն Վեհ. եւ Ազգասէր Հայրապետի, — որ զցայգ եւ զցերեկ Եկեղեցւոյ եւ Ազգիս պայծառ յառաջադիմութեան եւ բարեկարգ ապահովութեան համար անխոնջ կտքնի, — խորին ուշադրութեան արժանանալով եւ զայն ըստ կարեւորութեանն գրաւելով՝ բարեհաճեցաւ իմ նուաստութիւնը յատկապէս հրաւիրել այսր ի Ս. Էջմիածին, եւ աստի կրկին նպատակը իրագործելով ծաղկեցնել ձայնագրութիւնը, այս ինքն՝ թէ նոյն արհեստը աննախանձ մատակարարել յատկապէս ի վիճակաց Ռուսաստանի հաւաքեալ դպրաց եւ Մայր Աթոռոյ ուսումնարանի մէջ եղած աշակերտաց եւ թէ եկեղեցական Շարականները եւ երգերը ձայնագրել տալ եւ տպագրութեամբ ի լոյս ընծայել, որպէս զի այս արհեստ նա եւ անկորուստ եւ ապահով պահուի եւ տարածուի: Եւ ես որքան որ ուսած էի իմ բազմերախտ վարժապետ հանգուցեալ Գաբրիէլ Ց. Երաննեան քաջահմուտ Ձայնագրագետէ եւ կներէին իմ երկարժամանակեայ հմտութիւնս եւ փորձառական վարժութիւնք այս արհեստի մէջ՝ անձանձրոյթ սիրով հաղորդեցի իմ աշակերտաց որ աստ, եւ այսպիսի պարտաւորեալ ջանիցս կատարման միջոցին՝ ներկայ դասագիրքը եւս պատրաստեցի, որպէս զի առաւել դիւրութիւն մատակարարեմ թէ աշակերտացս եւ թէ այլոց ուսանողաց Հայ. Եկեղեցական Ձայնագրութիւնը ընդ փոյթ եւ կանոնաւորապէս ընդհանրացնելոյ անձկանօք, զոր եւ իբրեւ նախընծայ երախայրիք նուիրելով յանուն Վեհափառ եւ Ազգասէր Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգեայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի՝ եւ Նորին Սրբութեան շնորհիւ իմ սիրելի Ազգայնոց, միանգամայն կաղաչեմ առաջին անգամ ի լոյս ընծայեալ այսպիսի դասագրքի ինչ ինչ թերութեանց՝ եթէ կան՝ ներողամիտ հանդիսանալ, եւ եթէ ուսուցիչք եւ ուսանողք ներկայ դասագիրքէ կօգտուին, ես մեծապէս գոհ կլինիմ իմ նպատակս եւ ջանքս պսակուած համարելով յօգուտ Ազգիս եւ ի փառս եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց,

Որում մնամ յաւէտ

Խոնարհ եւ հարազատ որդի եւ ծառայ

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ս. ԹԱՇՃԵԱՆ.

# ԴԱՍԱԳԻՐՔ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ·

---

### ՄԱՍՆ Ա·

---

#### ՁԱՅՆՔ ԵՒ ՁԱՅՆԱՆԻՇՔ·

*Երաժշտութիւնն մարդուս հոգին շարժելոյ արհեստն է՝ ձայնից միջոցաւ՝ զնոսա՝ ականջաց հաճոյական կերպով յօրինելով և յարդարելով։*

*Ձայնն մարմնոց տատանմամբ լսելեաց վերայ ներգործեալ տպաւորութիւնն է։*

*Երաժշտութեան համար միայն այն ձայները կգործածուին՝ որք լսողութեան հաճելի լինելով՝ որոշ և անշփոթ հնչմունք մի ունին։*

*Իսկ այն ձայներն՝ որք լսողութեան անհաճոյ տեսակները կըկազմեն՝ Երաժշտութեան համար չեն գործածուիր, վասն զի*

ոչ ինչ աստիճան լինելը կհասկացուի և ոչ ներդաշնակութեան կըգայ, ինչպէս են երկու դիմահար մարմիններէ պատճառած ձայներն:

Երաժշտական ձայներուն ականջի հաճոյական յաջորդութիւնն կըկոչուի Մեղեդի, և հաճոյական կերպով նոցա ի միասին կապուիլը կըկոչուի Ներդաշնակութիւն:

Երաժշտութիւնն երկու տեսակ է՝ Ձայնական և Գործիական:

Ձայնական երաժշտութիւնն մէկ կամ շատ ձայներու ներդաշնակութեամբ ըստ կանոնի գրելն և երգելն կուսուցանէ:

Գործիական երաժշտութիւնն որ և իցէ մի նուագարանը արհեստին կանոնին համեմատ զարնել կամ հնչեցնելն կուսուցանէ:

---

## ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ

---

Երաժշտական ձայներն խօսքի պէս գրի առնլոյ և երգելոյ արհեստին կասուի Ձայնագրութիւն:

Ձայնագրութեան մէջ ձայները ցուցանող նշանքն կանուանուին Ձայնանիշ կամ Խազ:

Երաժշտական ձայնագրութեան մէջ գըլխաւորապէս եօթն տեսակ յայտանիշ կը գործածուի՝ որոց անուններն են հանդերձ ձեւերով ձայնանիշեց,

1, Փուշ — որոյ կրճատ համառօտութիւնն է փօ
2, Էկորձ » է
3, Վերնախաղ » վէ
4, Բէնկորձ » բէ
5, Խուսրովային » խօ
6, Ներքնախաղ » նէ
7, Պարոյկ » պա

Երկրորդական ձայնանիշք

Փուշ ( ) » փօ
Էկորձ » է
Վերնախաղ » վէ
Բէնկորձ » բէ
Խուսրովային » խօ
Ներքնախաղ » նէ
Պարոյկ » պա

Երաժշտական ձայներն կլինին երկայն կամ կարճ, բարձր կամ ցած, մեղմ կամ ուժգին. այս

երեք բաժանումն կկոչուի ձայնին տեւողութիւնը՝ աստիճանը և զօրութիւնը:

## ԳԼՈՒԽ Ա.

### ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆԵՐՈՒՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ.

### Ա, Չափ.

Ձայնագրութեան մէջ տեւողութիւն կրկոչուին այն նշաններն՝ որք ձայներու վերայ գրուելով՝ նոցա որչափ ժամանակ շարունակուիլը (երկարիլը կամ կարճանալը) կը յայտնեն:

Տեւողութեան նշաններն եօթն հատ են, որոց անուններն են

| | | | |
|---|---|---|---|
| ◦ | Սուղ | $\frac{4}{4}$ | ժամանակ |
| ⁒ | Զոյգկէտ | $\frac{2}{4}$ | » |
| · | Կէտ | $\frac{1}{4}$ | » |
| , | Ստոր | $\frac{1}{8}$ | » |
| » | Երկստոր | $\frac{1}{16}$ | » |
| ◦ | Ծունկ | $\frac{1}{32}$ | » |
| ○○ | Ծնկներ | $\frac{1}{64}$ | » |

Մի եղանակ կանոնաւոր երգելոյ համար՝ այս տեւողութեան նշանները պէտք են ձայնանիշերուն վերայ դրուիլ՝ իւրեանց տեւողութեան համաձայն, ապա թէ ոչ՝ առանց սոցա կարող չեմք կանոնաւոր երգել, այլ ամեն մէկ ձայնանիշին ձայները կարող եմք հանել։

Տեւողութեան նշաններով կազմուած եղանակները երգելոյ համար հաւասար մասերու կբաժնուին, այս հաւասար մասերը կկոչուին Չափ։

Չափն ժամանակին բաժանումն է կանոնաւոր և շրջանաւոր կարգով։

Ինչպէս որ ձայներուն միութիւնը եօթն ձայնից հաւասար շրջաններու բաժնուած է, այսպէս ևս երաժշտութեան մէջ ժամանակը Չափ կոչուած հաւասար շրջաններու բաժնուած է։

Երգուելոյ ատեն չափերը կզարնուին կանոնաւոր միջոցի մէջ եղած ձեռքի շարժմամբ՝ որուն կասուի Բաղխում։

◦ Սուղն կպարունակէ չորս Բաղխում՝ այս ինքն $\frac{4}{4}$ ժամանակ

» Ջոյգկէտն երկու $\frac{2}{4}$ »

• Կէտն մէկ $\frac{1}{4}$ ժամանակ

, Ստորն կէս $\frac{1}{8}$ » որով երկու Ստոր պէտք է մէկ Բաղխման համար։

» Երկստորն քառորդ $\frac{1}{16}$ ժ․ որով չորս Երկստոր պէտք կլինի մէկ Բաղխման համար։

∘ Ծունկն կէս քառորդ $\frac{1}{32}$ ժ․ որով ութն Ծունկ պէտք կլինի մէկ Բաղխման համար։

∞ Ծնկներ քառորդի քառորդ $\frac{1}{64}$ ժ․ որով տասն և վեց Ծնկներ պէտք է մէկ Բաղխման համար։

Սուղն կարժէ երկու Զոյգկէտ կամ չորս Կէտ, կամ ութն Ստոր, կամ տասն և վեց Երկստոր, կամ երեսուն և երկու Ծունկ, և կամ վաթսուն և չորս Ծնկներ։

Եկեղեցական ձայնագրութեան մէջ եղած բոլոր գրութիւնք $\frac{1}{4}$ ի արժողութեամբ՝ այս ինքն մէկ Բաղխմամբ կըգրուին և կըգատուին իբրև բառ։

Այն երգեր՝ որ [illegible] կերգուին, նոցա ամէն մէկ Բաղխումն $\frac{1}{4}$ ի արժողութեամբ վար՝ և յետոյ վեր կզարնուին. իսկ այն երգերն՝ որք [illegible] և կամ [illegible] կերգուին, նոցա ևս ամէն մէկ Բաղխում դարձեալ $\frac{1}{4}$ ի արժողութեամբ միշտ վար կըզար-

նուին։ Այս ընթացքով երկու Ստոր կամ չորս Երկստոր կամ ութ Ծունկ կամ տասն և վեց Ծնկներն միշտ մէկ Կէտի՝ այս ինքն $\frac{1}{4}$ Բաղխման արժէք ունին։

Երբոր մի ձայն կամենամք չորս Բաղխում երկարեցնել, նորա տևողութեան նշանն է ∘ Սուղը, որ մէկ ձայնանիշի վերայ դրուելով՝ ձայնը չորս Բաղխում այս ինքն $\frac{4}{4}$ ժամանակ կերկարի, ինչպէս,



Զոյգկէտն մի ձայնանիշի վերայ դրուելով՝ նորա ձայնը երկու Բաղխում այս ինքն $\frac{2}{4}$ ժամանակ երկարեցնել կը յայտնէ, ինչպէս



Կէտն մի ձայնանիշի վերայ դրուելով՝ նորա ձայնը մէկ Բաղխում այս ինքն $\frac{1}{4}$ ժամանակ երկարեցնել կը յայտնէ, ինչպէս,



Եթէ մի եղանակի ընթացքը՝ Ստորի, Երկստորի, Ծունկի և Ծնկների արժողութեամբ գրուի և այնպէս երգուի, այն ժամանակ այս տևողութեան նշաններն առանձին չեն գործածուիր, այլ միշտ մէկ Բաղխման արժէքով կը գործածուին, և

որովհետեւ Ստորը կէս Թաղխում լինելով՝ երկու Ստոր պէտք կլինի մէկ Թաղխման համար, որուն երկրորդը չի կրկնուիր, ինչպէս,



Այսպէս եւ Երկստորն քառորդ $\frac{1}{16}$ Թաղխում լինելով՝ չորս Երկստոր պէտք կըլինի մէկ Թաղխման համար, որ միայն առաջնադիր ձայնանիշին վերայ կդրուի, ինչպէս,



Ծունկը կէս քառորդ $\frac{1}{32}$ Թաղխում լինելով՝ ութ Ծնկներ պէտք կըլինի մէկ Թաղխման համար, որ միայն առաջնադիր ձայնանիշին վերայ կդրուի, ինչպէս,



Ծնկներն $\frac{1}{64}$ Թաղխում լինելով՝ տասն եւ վեց Ծնկներ պէտք կըլինի մէկ Թաղխման համար՝ միայն առաջնադիր ձայնանիշին վերայ դրուելով, ինչպէս,



Իսկ եթէ մի եղանակի գրութիւնը ծանըր լինի, եւ նորա ընթացքը Ստոր՝ Երկստոր՝ Ծունկ՝ Ծնկներ տեւողութեան նշան-

ներով լինին, և ամեն մէկ Բաղխման մէջ անխտիր գործածուին եղանակաց կազմութեան համաձայն, այն ժամանակ այս գրրութիւնները դիւրաւ գրելոյ կամ երգելոյ համար իւրաքանչիւր Բաղխումը պէտք է ձեռաց չորս մատերու վերայ բաժանել, և ամեն մէկ մատը մէն մի Երկատոր հաշուել, որով կըլլինի չորս մատն մէն մի Երկատորի հաշուով՝ չորս Երկատոր՝ որ կարժէ մէկ Բաղխում, կամ երկու մատն՝ մէկ Ստոր, մէկ մատին կէսը՝ Ծունկ, որով կլլինի չորս մատը ութ Ծունկ՝ որ կարժէ մէկ Բաղխում: Այսպէսով եթէ մէկ մատը մէկ ձայն առնէ, նորա տեւողութեան նշանն է Երկատոր. եթէ մէկ ձայնը երկու մատ առնէ՝ Ստոր է. եթէ երեք մատ՝ երեք Երկատոր է. եթէ չորս՝ մէկ Կէտ է. եթէ մէկ մատը երկու ձայն առնէ՝ Ծունկ է, իսկ եթէ չորս ձայն՝ Ծնկներ, ինչպէս,

 կամ  կամ 

կամ  կամ  կամ

 կամ  ուրիշ օրի-

նակ, [notation] կամ [notation] կամ [notation] կամ [notation] ևլն։

Ձայնագրութեան մէջ երկու նշան ևս կայ՝ որք կըկոչուին Թաւ (ꞏ) և Կիսաթաւ (ꞏ)։ Թաւը մէկ Բաղխման $\frac{5}{4}$ ը կցուցնէ, և Կիսաթաւը $\frac{3}{8}$ ը՝ ինչպէս,

[notation] փոխանակ [notation]

[notation] » [notation]

Կայ ևս քառորդ Կիսաթաւ ևս (+), որ գրեթէ խիստ քիչ կըգործածուի։

Չափերն կամ Բաղխումներն ընդհանրապէս կըզարնուին երեք տեսակ, Ա ը՝ յօրդոր կամ միջակ, Բ ը՝ չափաւոր, և Գ ը՝ ծանր։

Միջակ, կամ յօրդոր ընթացքով երգուած Հարականներն՝ միջակ Բաղխմամբ կըզարնուին, որոց մէջ գործածուած տևողութեան նշաններն են՝ Կէտ, Զոյգկէտ և Ստոր, խիստ քիչ տեղ ևս Երկստոր։

Միջակէն քիչ ծանր ընթացքով երգուած Հարականներն չափաւոր Բաղխմամբ կըզարնուին, որոց մէջ գործածուած տևողութեան նշաններն են » · , » ꞏ ։

Իսկ ծանր ընթացքով երգուած Շարականներուն Բաղխումը կըլլէնի ծանր չափով, որոց մէջ կգործածուին տևողութեան բոլոր նշաններն ։

Այս Բաղխման վարժութիւնը և ճշտութիւնը շատ անհրաժեշտ է երաժշտական միօրինակութեան համար, և ամէն կերպով ուշադրութիւն տալ պէտք է՝ որ Բաղխման մասերը իրարու հաւասար լինին՝ և ոչ թէ մին կարճ և միւսն երկար։

Աշակերտն վերոգրեալ կանոններուն վերայ ըստ արժանւոյն վարժուելէն յետոյ՝ պէտք է ուսուցիչն տարբեր ձայնանիշերով և տևողութեան նշաններով Բաղխման վարժութիւններ կատարել տայ՝ ոչ թէ եղանակաւ՝ այլ միայն ամէն մէկ ձայնանիշէն միավանկ անունները տալով, որպէս զի Բաղխման վերայ լաւ վարժուին։

Մենք այս տեղ մէկ քանի օրինակ կըդընեմք ։



Որ և իցէ մի ձայնէ՝ եթէ ձայնի կարգաւ՝ ութ աստիճան բարձր ելնելոյ և կամ ցած իջնելոյ լինիմք, ութերորդ ձայնը Ա.ին հետ մի համաձայնութիւն կստանայ և երկուքն ևս մի և նոյն ձայն կձևացունեն, միայն թէ սոցա տարբերութիւնը Ա.ը Բ.ին ցածը և Բ.ը Ա.ին բարձրը կըլինի, և այսպէս շարունակելով, որչափ որ աւելի աստիճանները ելուի, ամեն ութերորդ ձայն այս առաջներորդին հետ համաձայնութիւն կգտնէ. վասն որոյ ութերորդ ձայները առաջիններուն կրկնութիւններն լինելով՝ իսկական և բուն ձայները կըլինին եօթն աստիճան, և այս դասակարգութեանց իւրաքանչիւրին ամբողջութիւնը Ա-կորդ կկոչուի, վասն զի ութն ձայն կպարունակէ իւր մէջ՝ առաջնոյն կրկնութիւնն ևս հաշուելով:

Եօթն աստիճան ձայներուն առաջին ձայնը փուշն լինելով՝ երկրորդն ևս իբր ութերորդ փուշ կրկնուելով՝ ելևէջը կըկազմեն:

Ութն ձայնից միութեան Ելեւէջ կասուի:

Ելևէջին կամ Իջելին Ա ձայնէն Բ ը, անկէ Գ ը, և մինչև ութերորդ եղած ձայներուն հեռաւորութեան՝ միջոյ կամ տափծան կըսուի:

Ինչպէս Փուշէն Իկորճ՝ մէկ աստիճան, Իկորճէն Վերնախաղ՝ մէկ աստիճան, Վերնախաղէն Բենկորճ՝ մէկ աստիճան, ևլն։

Ձայներուն աստիճանաբար վեր ելելուն կանոնաւոր կարգը կլլնի՝ Փուշ, Իկորճ, Վերնախաղ, Բենկորճ, Խոսրովային, Ներքնախաղ, Պարոյկ, Փուշ, և իջնելուն կարգը՝ Փուշ, Պարոյկ, Ներքնախաղ, Խոսրովային, Բենկորճ, Վերնախաղ, Իկորճ, Փուշ։

Ութերորդ ձայնը թէպէտ բարձր է, բայց Ա Փուշին նման մի ձայն ունենալուն՝ նոյն Փուշ անունը կառնու, որով ութերորդէն մէն մի աստիճան վեր եղած ձայները դարձեալ պիտի կոչուին՝ Իկորճ, Վերնախաղ, ևլն. որովհետև ճիշտ Ա Իկորճին, Վերնախաղին նման են ձայներն՝ միայն թէ մի ութնեակ բարձր։

---

## Բ.

---

### Բարձրանիք և Սփուռանիք,

---

Հայկական Ձայնագրութեան մէջ Ձայնանիշերը կամ Խազերը պարզ գրի պէս մէկ տողի վերայ կըգրուին, և ութնեակին բարձրը կամ ցած ձայները իւրեանց ձևերէն

կը ճանչցուին, ուստի մի ութնեակ բարձր ձայները [illegible] ասուած այս (·կամ -) կէտով կզանազանուին միւսներէն, ինչպէս · սոքա թէ և առաջիններուն ձեւն ու ձայնն ունին, բայց մի ութնեակ բարձր լինելով՝ կկոչուին Երկրորդական [illegible], [illegible], ևլն: Նոյնպէս ևս մի ութնեակ ցած ձայները [illegible] ասուած այս ձեւ (–) նշանով կորոշուին միւսներէն, · սոքա ևս թէև միւսներուն ձեւն ու ձայնն ունին, սակայն մի ութնեակ ցած լինելով՝ կկոչուին [illegible] [illegible], [illegible], [illegible], [illegible]:

Եթէ բարձրութեան աստիճանը մի ութնեակ ևս բարձրացնել հարկ լինի՝ [illegible] կկրկնուի, ինչպէս ( () ) որք կըկոչուին Երրորդական [illegible], [illegible], ևլն:

Այս պարբերութեան մէջ յիշուած ամէն տեսակ Ձայնանիշ կամ Խազ և կամ Ձայնագրերը այս տեղ կնշանակեմք առանձին:

**Ցած կամ Ստորին··**

Միջին

Բարձր

Սուր կամ աւելի բարձր

---

Գ.

---

ԿԻՍՎԵՐ ԵՒ ԿԻՍՎԱՐ

---

Ութնեակին ամէն մէկ ձայներուն մէջ մէն մի ամբողջ միջոց կամ աստիճան կային, այս միջոցներուն մէջ միջանկեալ ձայներ եւս կան՝ որոնց կըսուին՝ Կէսաձայն, զի սոքա եւս ամբողջի պէս ցածութեան և բարձրութեան աստիճաններ ունին:

Կիսաձայները մասնաւոր ձև մի չունին, այլ նոյն իսկ ձայնանշաց վերայ այս երկար նշանը ( ̋ ) դրուելով՝ կիսվեր և կիսվար կիսաձայն կկոչուին, ինչպէս:

փուշ կիսվեր կամ Էկորձ կիսվար:

Էկորձ կիսվեր կամ Վերնախաղ կիսվար:

Վերնախաղ կիսվեր կամ Բենկորձ կիսվար:



3436-55

Բէնկորձ կիսվեր կամ Խոսրովային կիսվար։

Խոսրովային կիսվեր կամ Ներքնախաղ կիսվար։

Ներքնախաղ կիսվեր կամ Պարոյկ կիսվար։

Պարոյկ կիսվեր կամ Փուշ կիսվար։

Այս կիսաձայները եղանակաց մէջ իրենց ձայնին կամ իրենցմէ մի աստիճան վեր եղող ձայներուն տեղ կըգործածուին միշտ։

Մի կիսաձայն երբ իւր ձայնին տեղ գործածուի, իւր ձայնին անունովը ԿԻՍՎԷՐ կըկոչուի, և երբ իրմէ վեր եղող ձայնին տեղ գործածուի, իրմէ վեր եղող ձայնին անունովը ԿԻՍՎԱՐ կկոչուի, *) ինչպէս,

---

(*) Եթէ մի եղանակի մէջ ձայները կիսաձայներով յաջորդաբար բարձրանան, այն կիսաձայները իրենց ձայնի անունով ԿԻՍՎԷՐ, իսկ իջած ատեն իրենցմէ վեր եղող ձայնի անունով ԿԻՍՎԱՐ կկոչուին. այս ընթացքը կը պատահի Ազգային երգերու մէջ՝ խիստ քիչ անգամ,



 ։ Այս տեղ Գա կիսաձայնը, իւր ձայնին այս ինքն Գային տեղ գործածուելով՝ նորա անունով պիտի կոչուի Գա Աէ-վէր, վասն զի Գա ձայնը իւր բուն ձայնէն կէս ձայն վեր եղած կըցցունէ։

 ։ Այս տեղ ևս Գա կիսաձայնը իրմէ վեր եղած ձայնին այս ինքն Փօյի տեղ գործածուելով, իրմէ վեր եղող ձայնին անունով պիտի կոչուի Փօ Աէ-վար, զի Փօ ձայնը իւր բուն ձայնէն կէս ձայն վար եղած կըցցունէ։

Այլ օրինակ. 
 ։ Այս օրինակին մէջ Խօ և Է կիսաձայները յինքեանց վեր եղող Նէ և Վէ ձայներուն տեղ գործածուելով, նոցա անունով կըկոչուին Նէ և Վէ Աէ-վար, զի Նէ և Վէ ձայները իրենց բուն ձայնէն կէս ձայն վար եղած կըցցուցնեն. որով Խօյէն և Էյէն ևս կէս ձայն բարձր կըլլինին. իսկ Գա կիսաձայնը իւր ձայնին այս ինքն Գային տեղ գործածուելով, իւր ձայնին անունովը կը կոչուի Գա Աէ-վէր, վասն զի Գա ձայնը իւր բուն ձայնէն կէս ձայն վեր ե-

ղած կրցուցանէ, որով Փօ ձայնէն և կէս ձայն ցած կլինի։

Օրինակ,   ։ Այս տեղ երկու կիսաձայները կկոչուին Փօ և Վ․է Կե․վար․   ։ Այս տեղ ևս մի և նոյն կիսաձայները կկոչուին Գա և Նէ կէսվեր։ Բայց ինչպէս որ ըսինք՝ մի կիսաձայն եղանակի կազմութեան համեմատ եթէ իւր ձայնին տեղ գործածուի՝ նորա անունով Կե․վեր կը կոչուի, և եթէ իրմէ վեր ձայնին տեղ գործածուի՝ նորա անունով Կե․վար։

Կիսաձայնական կամ կիսաձայներով կազմուած մի եղանակ կարդալու ժամանակնիս՝ Կե․վեր և Կե․վար անունները սովորութիւն եղած չէ ըսել, այլ միայն նորա ուժը և կանոնը պէտք է գիտնալ․ զոր։



Այս տեղ գիտենք որ Խօ և Նէ կիսաձայները իրենցմէ վեր եղած ձայներուն տեղ, և Գա կիսաձայնն ևս իւր ձայնին տեղ գործածուած են, ուստի երգելոյ ատեն՝ փոխանակ Փօ, Նէ, Վ․է Կե․վար, Նէ, Փօ, Գա Կե․վեր, Նէ Կե․վար ևըն ասելոյ, կըսեմք պար-

զապէս, Փօ, Իշ, Վէ, Իշ, Փօ, Պա, Նէ, Խօ ևըն․ միայն թէ կանոնը, կարգը, և աստիճանը գիտեմք եղանակի կազմութեան համաձայն։

Ամբողջ ձայներով և կիսաձայներով կազմուած դիւրին էջեըներով և եղանակաց հատուածներով վարժութիւնք, որոնց տևողութեան նշաններն պէտք է լինին ◦ ․․ ․ ՚ »

Նախ ձայնանիշներուն միավանկ անուններն տալով երգել եղանակաւ, ուշ դնելով Բաղխումներուն․ ի սոցանէ մի քանին մենք այս տեղ կըդնեմք։





Այս տեսակ վարժութիւններով պէտք է խիստ շատ վարժուի աշակերտը, և ամէն կերպով ուշադրութիւն ընելու է Բաղխման միօրինակութեանը:—

---

Դ.

---

ԵՂԱՆԱԿՔ ԵՒ ՆՈՑԱ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

---

Հարականի եղանակները ութ ձայնի վերայ յօրինուած են, և այս ութ ձայն ե-

զանակները մէկ կամ աւելի օտարաձայնու-նէք ունին իրենց նախնական եղանակի վե-րայ հիմնեալ, որոց դաշնաւոր կըսեմք, սոքօք կըկազմուին Շարականի բոլոր եղանակնե-րը։

Շարականին ձայներն հետեւեալներն են.

| | | | |
|---|---|---|---|
| ԱՁ | որ կկոչուի | առաջին ձայն եղանակ։ | |
| ԱԿ | ,, | առաջին կողմ | ,, |
| ԲՁ | ,, | երկրորդ ձայն | ,, |
| ԲԿ | ,, | աւագ կողմ | ,, |
| ԳՁ | ,, | երրորդ ձայն | ,, |
| ԳԿ | ,, | վառ ձայն | ,, |
| ԴՁ | ,, | չորրորդ ձայն | ,, |
| ԴԿ | ,, | վերջ ձայն | ,, |

Ամեն եղանակ իրեն յատուկ եղած եւ և էջն և վերջաւորութիւնն ունի, եղանակի կազմութեան համաձայն, այս սկզբամբ է որ ամեն եղանակ իրարմէ կըզատուին, և մի երգի եղանակը ութ ձայնից եղանակ-ներուն ո՛ր տեսակէն լինելը՝ իրենց վերջա-ւորութենէն, դիմած ձայներէն, գործա-ծուած կիսաձայներէն, և ելեւէջի ընթացքէն կճանչցուի։

Ամէն եղանակաց գրութեանց մէջ պէտք է առաջնորդ ունենամք մեզ նոյն եղանակին դիմած ձայներն և նորա ձայնառութիւնը, այս ինքն վերջաւորութիւնը։

Ա.Զ. առաջին ձայն եղանակ։

Ա. ձայն եղանակը իւր ընթացքին մէջ Նէրքնախաղ ձայներուն կը դիմէ երբեմն խօսրովային և երբեմն ևս խօսրովային կիսվեր կը գործածէ, բայց Բէնկօրծ ձայներուն վերայ հանգչած ժամանակը միշտ խօսրովային կիսվեր գործածելով կը հանգչի, և այս կիսաձայնով Նէրքնախաղ ձայնը կը վերջացնէ։

Ա. ձայն եղանակի գրութեան մէջ մեզ առաջնորդող ձայնն է Նէրքնախաղը։

Էջել Ա. ձայն եղանակի. *) 



Այս էջելին մէջէն հետևեալ ձայներն առնլով՝ Ա. ձայն եղանակ կը կազմուի *)։

---

(*) Հետևելով դարձուածքին, որ ճիշտ խօսրովային վերջացնելով վերջ եղանակ կկազմէ.

(*) Ուրաքանչիւր ձայնից եղանակաց թէ կազմութեան և թէ նախերգանքի համար դրած օրինակներնիս այն եղանակաց համառօտ կտորներն են.



ԱԶ. Եղանակք ի նախերգանս:

Միջակ բաղխմամբ· 



Չափաւոր բաղխմամբ· 



Աշակերտն պետք է իւրաքանչիւր ձայնի եղանակաց վերայ վարժութիւններ անէ, նախ յորդոր, միջակ և չափաւոր բաղխմամբ երգուած Շարականի երգերով, և ապա ծանր-ներով:

ԱԿ. Առաջին կողմ եղանակ:

Առաջին կողմ եղանակը քիչ շատ նմանութիւն ունի Առաջին ձայն եղանակին. բայց սա միշտ Փուղ ձայներուն կը դիմէ, և վերջացուցած ժամանակը Խոսրովային Կիսվերով Ներքնախաղ ձայնը կըվերջացնէ: Իսկ վերջին վերջաւորութիւնը Ա. Երկրորդի վերայ կանէ:

Այս եղանակի գրութեան մէջ ևս առաջնորդ ունիմք Փուշ և Նէւահաւէնտ ձայները:

Աչքել Ա. կողմ եղանակի· 



Այս էջելին մէջէն հետևեալ ձայներն առնլով կըկազմուի Ա. կողմ եղանակ:



### Ա. կողմ եղանակն ի նախերգանս:

Միջակ բաղխմամբ· 



Ծանր բաղխմամբ· 



### ԻԶ. Երկրորդ ձայն եղանակ:

Երկրորդ ձայն եղանակը Եկուրն ձայներուն կը դիմէ, և Պարսից ձայներուն վերայ համգչելով՝ մերթ Վ.Հէքնախաղ և մերթ Վ.Հէքնախաղ կէսով

գործածելով Խոսրովային ձայնը կը վերջացնէ։

Ի՛Զ եղանակին մէջ ձայներուն բարձրանալու ժամանակ Վերնախաղ՝ և ցածնալու ժամանակ Վերնախաղ Կէսէր կը գործածէ սակաւ բացառութեամբ։

Այս եղանակի գրութեան մէջ ևս առաջնորդ ունիմք Աչքեր և Խոսրովային ձայները։

Աջէլ Ի․ ձայն եղանակի· 



Այս էջելին մէջէն հետևեալ ձայներով կը կազմուի Ի․ ձայն եղանակ։



Ութերորդ ձայն եղանակէ մի նախերգանք։

Միջակ բաղխմամբ· 



Ծանր բաղխմամբ· 



### ԻԷ. Աւագ կողմ եղանակ:

Աւագ կողմ եղանակը Վերնախաղ ձայնին տեղ Վերնախաղ նշանը կը գործածէ, և այս ձայնին դիմելով՝ վերջացուցած ժամանակ Պարոյկ նշանաւորով Փուշ ձայնը կը վերջացնէ:

Այս եղանակի ծանր երգոց մէջ մինչև Խոնարհային ձայնը կիջնայ և նորա վերայ կը հանգչի իբրև վերջաւորութիւն:

Այս եղանակի գրութեան մէջ ևս առաջնորդ ունիմք Վերնախաղ նշանը և Փուշ ձայները:

Իջել Աւագ կողմ եղանակի. 



Այս էջելին մէջէն հետևեալ ձայներով կըկազմուի Աւագ կողմ եղանակ:



Առաջ կողմ եղանակէ մի նախերգանք ։

Զափաւոր բաղխմանբ·



Ծանր բաղխ·



Գ․Զ․ Նրորդ ձայն եղանակ ։

Նրորդ ձայն եղանակը երեք կիսաձայն կը գործածէ, որք են ՙՍեբինախաղ կեօմար· Պարայ կեօ-մեր և Վ. Էրնախաղ կեօմար, և այս եղանակը փօ-ղ ձայներուն դիմելով՝ խօարօմայէն ձայներուն վերայ կհանգչի, և էջելի կանոնով փոխանակ խօարօմայէն վերջացնելոյ՝ երկրորդ փօ-ղ կըվերջացնէ· իսկ վերջի վերջաւորութիւնը խօարօմայէն ձայնին վերայ կընէ ։

Նրորդ ձայն Հ. արականի եղանակաց մէկ քանի մասնաւոր կտորներու մէջ ՙՍեբինախաղ և Վ. Էրնախաղ ձայները կը գործածուին ։

Այս եղանակի գրութեան մէջ ևս առաջնորդող ձայներն են խօարօմայէն և փօ-ղ ։

Իջել Գ. ձայն եղանակի. 



Այս իջելին մէջէն հետևեալ ձայներն առնլով՝ Իրորդ ձայն եղանակ կը կազմուի։



Գ.Ձ. Եղանակն ի նախերգանս։

Զարփառոր բաղխմանք. 



Ծանր բաղխմանք. 



Ծանր բաղխմանք. 



Գ.Ձ. եղանակին մէջ Ա. Վերնախաղներըը խա- կական են միշտ։

### Գ. Կ. ՎԱՌ ՁԱՅՆ ԵՂԱՆԱԿ։

Վառ ձայն եղանակը Փող ձայնին տեղ ՓՈՂ ՆԻՇԱՎՈՒՐ և ՎԵՐՆԱԽԱՂԻ տեղ ՎԵՐՆԱԽԱՂ ՆԻՇԱՎՈՒՐ կը գործածէ, և ԳԻՒՐՏԻ ձայներուն դիմելով ԽՈՍՐՈՎԱՅԷՆ կը վերջացնէ։

Այս եղանակի գրութեան մէջ առաջնորդող ձայներն են ԳԻՒՐՏԻ և ԽՈՍՐՈՎԱՅԷՆ։

Աչքել Գ. Կ. եղանակի· 



Այս էջելին միջէն հետևեալ ձայներն առնլով՝ ՎԱՌ ՁԱՅՆ եղանակ կը կազմուի։



### Գ. Կ. ԵՂԱՆԱԿԻ ՄԸ ՆԱԽԵՐԳԱՆՔ։

Միջակ բաղխանանք· 



Ծանր բաղխմ· 



Գ.Կ. եղանակին մէջ Ա. Վերնախաղերը միշտ խսկական են։

Դ.Զ. Չորրորդ Ձայն եղանակ։

Չորրորդ ձայն եղանակը Փուշ ձայներուն կը դիմէ Վերնախաղ նիշեր և դուն ուրեք Պարոյկ նիշեր գործածելով· վերջացուցած ժամանակ էջելի կանոնով փոխանակ Խոսրովային վերջացնելու՝ Պարոյկ նիշերով Փուշ ձայնը կըվերջացնէ, և երբեմն ևս Խոսրովային. իսկ վերջի վերջաւորութիւնը միշտ Խոսրովային ձայնը կըվերջացնէ։

Այս եղանակի գրութեան մէջ ևս աւաջնորդող ձայներն են Փուշ և Խոսրովային։

Իջել Դ.Զ. եղանակի· 



Այս էջելին մէջէն հետևեալ ձայներն առնլով՝ կըկազմուի Չորրորդ Ձայն եղանակ։



Դ.Զ. Եղանակն ի Նախերգմանէ:

Զափաւոր բաղխմանը· 



Ծանր բաղխմանը· 



Այս եղանակի մէջ ևս Ա. Վերնախաղները միշտ իսկական են:

Դ.Կ. ՎԵՐՋ ՁԱՅՆ ԵՂԱՆԱԿ։

Վերջ ձայն եղանակը ՊԱՐՈՅԿ ձայներուն դիմելով՝ և ՎԵՐՆԱԽԱՂ ԿԷՏԱՒՈՐ գործածելով՝ ՌԷՆԿՈՅԾ ձայներուն վերայ կը հանգչի և ԽՈՍՐՈՎԱՅԻՆ ձայնը կըվերջացնէ։

Այս եղանակի վերայ եղած ծանր երգոց և Մեղեաց ընթացքը կընմանի ԽՈՍՐՈՎԱՅԻՆ վերջաւորող Դ.Զ եղանակի։

Այս տեսակ եղանակներու մանաւանդ Մեղեաց մէջ երբեմն ևս ՌԷՆԿՈՅԾ ձայնը կը վերջացնէ փոխանակ ԽՈՍՐՈՎԱՅԻՆԻ, իսկ վերջի վերջաւորութիւնը մէկ քանի կիսաձայներով առաջին ՓՈՒՇ կը վերջացնէ՝ Դ.Զ եղանակի տեղափոխուած էջելի ընթացքով *)։

Այս եղանակի գրութեան մէջ ևս առաջնորդող ձայներն են ԽՈՍՐՈՎԱՅԻՆ և ՊԱՐՈՅԿ, իսկ ծանր երգոց մէջ ևս ՓՈՒՇ և ԽՈՍՐՈՎԱՅԻՆ։

Իջել Դ.Կ եղանակի․ 



(*) Տե՛ս Տեղափոխութեան մէջ ։

*Այս էջելի մէջէն հետևեալ ձայներն առնլով կը կազմուի Վերջ ձայն եղանակ*



Գ. Ա. Եղանակէ ի Նախերգանէ։

**Միջակ քաղխմամբ.** 



**Ծանր քաղխմամբ.** 



*Այս եղանակի մէջ ևս Ա. Վերնախաղ-ները իսկական են, երբեմն ևս Կիսվեր։*

## Ի·

### ԵՂԵՒԷՋԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ·

Շատ անգամ մի եղանակի ելևէջը կամ էջելը իւր բուն ձայնի աստիճանէն շեղելով՝ որ և իցէ մի ձայնէ կրնայ գրուիլ, և երկուքն ևս մի և նոյն եղանակ կձևացնեն, բայց էջելը իւր տեղէն շարժած ատենը էջելի ձայնից ընթացքը կպահէ, ինչպէս,



Այս ելևէջը Գ·Ձ եղանակի յատուկ է, որուն առաջին ձայնէն երկրորդը, երրորդէն չորրորդը, և հինգերորդէն վեցերորդը միշտ կէս են՝ և մնացածներն ամբողջ· ուստի երբոր սորա ելևէջը Նշուրծ ձայնէն սկսիմք և բաղդատեմք զայն Գ·Ձ եղանակի յատուկ եղող էջելի հետ, առաջինէն երկրորդը, երրորդէն չորրորդը, և հինգերորդէն վեցերորդը եղած ձայները պէտք է միշտ կէս լինին և մնացածներն ամբողջ, ինչպէս,

Գ·Զ·ի ելևէջ·
Տեղափոխուած·


Այս էջելը՝ որ իւր բուն տեղէն չորս ձայն բարձրէն գրուած է՝ բայց միշտ Գ·Զ եղանակ է, որոյ էջելի ձայնից ընթացքը պահուած է։

Ուրիշ օրինակ·

Գ·Զ·ի էջել·
Տեղափոխուած·


Այս էջելը ևս՝ որ իւր բուն տեղէն մի ձայն ցածէն գրուած է, բայց Գ·Զ եղանակի էջելի կանոնը պահած է։

Ուրիշ օրինակ·

Գ·Զ·ի էջել ·
Տեղափոխուած·


Ուրիշ օրինակ·

Բ·Կ· եղանակի էջել·
Տեղափոխուած·


Այս եւ Նուագ կողմ եղանակ է վերոյի-
շեալ կանոնով ։

Այս կանոնով կարող եմք ելեւէջը ամեն մէկ ձայնանիշէ եւ սկսիլ ։

Արեւելեան քաղաքական երաժշտութեան մէջ այս էջելի աստիճանները փոխող եղանակներուն եւ զատ անուններ սեպհականուած են, զորս աստ մի առ մի յիշելը մեր սահմանէն դուրս է․ միայն սա գիտնալ պէտք է՝ որ եկեղեցական երաժշտութիւնը կազմող ամեն եղանակ պէտք է իւրեանց սեփհականուած էջելի վերայ գրուի․ վասն զի եթէ ելեւէջը իւր տեղէն փոխելով՝ ամեն ձայներէ եղանակ կազմեմք, շատ դըժուար կըլինի եղանակաց ըմբռնումը, եւ այս ամեն մէկ ձայներէ եղանակ և ելեւէջ կազմելու սովորութիւնը Եւրոպական ձայնագրութիւնը կըգործածէ, եւ որովհետեւ Հայկական ձայնագրութիւնը Եւրոպականին նըման միայն երկու ելեւէջի վրայ հիմնեալ չէ, ուստի ո՛չ այնչափ ձայնաստիճանն եղանակը կըճանչցունէ՝ որքան որ եղանակը ըզձայնաստիճանն ։

# Օ.

## ԵՂԱՆԱԿԱՑ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄՈՒՆՔՆ.

Ինչպէս որ նախընթաց դասերուն մէջ յիշեցինք, ութ ձայն եղանակները մէկ կամ աւելի ստորաբաժանումներ ևս ունին, որք Դարձուածք կանուանին, ի սոցանէ ոմանց ընթացքը՝ իւրեանց նախնական եղանակի ընթացքին, և ոմանցն ևս բոլորովին տարբեր ուրիշ ձայնի եղանակի ընթացքի մօտ է:

Այս Դարձուածք կոչուած եղանակներուն վերջաւորութիւնը և դիմած ձայները տարբեր են իւրեանց նախնական եղանակի դիմած ձայներէն և վերջաւորութիւններէն:

### ԱԶ. Եղանակի դարձուածք:

ԱԶ. եղանակի դարձուածքը նման է Վերջ ձայն եղանակի՝ որ Փոխ ձայներու դիմելով Խոնարհականէն կըվերջացունէ:

### ԱԿ. Եղանակի դարձուածք:

ԱԿ. եղանակի դարձուածքը նման է ճիշտ Առաջ Կոչ եղանակի, և միայն կըտար-

բերի իւր վերջաւորութեամբը, իսկ գրութիւնը՝ տեղափոխուած էջելով կըգրուի *)։

Այս եղանակի վերջին վերջաւորութիւնը՝ իւր նախնական եղանակի վերջին վերջաւորութեան նման է։

### ԲՁ. Եղանակին դարձուածք։

ԲՁ. եղանակի դարձուածքը ճիշտ նման է Խոսրովային վերջաւորող ԳՁ եղանակին, իսկ գրութիւնը տեղափոխուած էջելով կը գրուի **)։

### ԲԿ. Եղանակին դարձուածք։

ԲԿ. եղանակի դարձուածքը շատ քիչ նմանութիւն ունի իւր նախնական եղանակի ընթացքին ***)։

### ԳՁ. Եղանակին դարձուածք։

ԳՁ. եղանակի դարձուածքը Վերնախաղ ձայներուն կըդիմէ և Գուրջին կիսվեր գործա-

---

(*) Տե՛ս Էջելի Տեղափոխութեան մէջ.
(**) Տե՛ս անդ.
(***) Տե՛ս Զարտուղի եղանակաց մէջ.

ծելով առանձին եղանակ կըկազմէ, իսկ վերջաւորած ժամանակ իւր նախնական եղանակի ընթացքով Գուրդյ կիսվերով Փոշ կըվերջացնէ։

Այս եղանակը երկրորդ տեսակ վերջաւորութիւն մի ևս ունի առաջին Վէրճուէուղէ վերայ, այս տեսակ վերջաւորութեանց մէջ Գուրդյ ձայնը խականն է։

Այս եղանակի գրութեան մէջ Վէրճուէուղ և Փոշ ձայներն են առաջնորդ։

Աջել· 

Գ·Կ· Եղանակի տարածութ+։

Գ·Կ· եղանակի դարձուածքը նման է Խոսրովյէն վերջաւորող Գ·Ձ· եղանակին։

Գ·Ձ· Եղանակի տարածութ+։

Գ·Ձ· եղանակը երեք տեսակ դարձուածք ունի· առաջինը իւր նախնական եղանակի ընթացքով փոխանակ Փոշ վերջացնելոյ Նէրճնախուղ կըվերջացնէ։

Երկրորդը Առաջին Կոզմ եղանակի ընթացքով դարձեալ Նէրճնախուղ կըվերջացնէ·

այս երկրորդ տեսակին մէջ երբեմն Աչկուրճ կիսավար և Վերնախաղ կիսավեր կըգործածէ, մանաւորապէս մէկ քանի հատուածներու մէջ։

Այս երկու տեսակ գրութեանց մէջ ևս Ներքնախաղ և Փուշ ձայներն են առաջնորդ։ Իսկ երորդ տեսակը իւր նախնական եղանակի կիսէն բոլորովին խոտորելով՝ Պարոյկ և Աչկուրճ ձայներու կդիմէ և Ներքնախաղ կիսավեր գործածելով, առանձին մի եղանակ կկազմէ Պարոյկէ վերայ հանգչելով, և վերջացուցած ժամանակ իւր նախնական եղանակի ընթացքով Պարոյկ կիսավերով Փուշ կվերջացունէ. իսկ վերջին վերջաւորութիւնները նախնական եղանակի վերջին վերջաւորութեան նման է։

Աչքել Գ.. տեսակին. 



Գ.Կ. եղանակի դարձուածք։

Գ.Կ. եղանակի դարձուածքն ևս երկու տեսակ է։ Մէկը նման է Գ.Չ. եղանակին, և միւսը Բ.Կ. եղանակի ծանր երգոց. այս երկու տեսակի գրութիւններն ևս տեղափոխուած էջելով կըգրուին։

## Ի·

### ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ԵՂԱՆԱԿԱՑ·

Եղանակաց փոխանցումն կըկոչուի, երբ որ մի եղանակի հատուած՝ ուրիշ մի եղանակի հետ և կամ մէկ երկու եղանակ իրարու հետ խառնուած կըլլան, իւրեանց ելևէջի բուն տեղը չկորսնցնելով, և կամ մի եղանակի կտոր՝ ուրիշ տարբեր մի եղանակի մէջ կմտնէ՝ միայն իւր սեպհական տեղը փոխելով։

Ինչպէս Գ.Կ. եղանակը Բ.Ձ. եղանակին մէջ կը խառնուի հետևեալ կերպով 



Վերջ ձայն եղանակի Ստեղիններու մէջ շատ անգամ Խոորոհայէն ձայնէն դէպ ի Փող ձայնը իջած և կամ վերջին վերջաւորութիւնը ըրած ժամանակ՝ Գ.Ձ. եղանակ կըխառնուի, միայն իւր տեղը կփոխուի, էջելին կանոնը պահելով, ինչպէս։



 ևլն։




Ըհա սկիզբէն մինչև կէսը Վ երջ ձայն եղանակ, և կիսէն մինչև վերջ Գ.Զ. եղանակ, սակայն իւր տեղը փոխելով և Փող ձայնը փոխանակ Խոսրովային ձայնի, Աշխոր կիսավար ձայնը փոխանակ Նէրքնախաղ կիսավար ձայնի, Վ էրքնախաղ կիսվեր ձայնը փոխանակ Պարոյկ կիսվեր ձայնի ևլն· տեղ գործածելով· այս ընթացքը էջելի տեղափոխութիւնն է, և Վ երջ ձայն եղանակի վերջին վերջաւորութիւնն ևս այս ընթացքով Փող ձայնը կվերջացնէ։

---

## Բ.

### ԶԱՐՏՈՒՂԻ ԵՂԱՆԱԿՔ·

Զարտուղի կասուին այն եղանակները, որոնցմէ ոմանք թէև իւրեանց ձայնի եղանակի յատուկ եղած էջելի կանոնը կպահեն, բայց վերջաւորութեան ժամանակ տարբեր կիսաձայներ գործածելով այնպէս կը-

վերջացունեն՝ ինչպէս են Ուղիղ են ճանապարհք և Աստուած հզօր Շարականի երգերը ևն. և երբեմն ևս վերջաւորութիւնը ուրիշ ձայնի վրայ ընելով կզարտուղին իւրեանց եղանակի կանոնէն, ինչպէս Գ.Կ. եղանակը՝ որ փոխանակ Խոսրովայինէ՝ Ա. Վերնախաղ կըվերջացունէ և Ով զարմանալի երգը կըկազմէ: Բ.Կ. եղանակն ևս փոխանակ Խոսրովայինէ՝ Ներքնախաղ կիսվարով Ա. Վերնախաղ կիսվար կվերջացունէ և կըկազմէ Գոհանամք զքէն Տէր, ևն:

Ոմանք ևս թէև սկսուածքի և վերջաւորութեան մէջ մի և նոյն ձայնի յատուկ եղած կանոնը կպահեն, բայց ընթացներուն մէջ այլ և այլ եղանակի կտորներ մտնելով զարտուղութիւն կկազմեն, ինչպէս են Մեղեդեաց և Տաղերու շատերը:

Իսկ ոմանք գործածելով որ և իցէ կիսաձայն, ութ ձայնից եղանակներէն տարբեր մի ընթացք կըկազմեն, առանց իւրեանց ներդաշնակութեան կանոնը կորսնցունելոյ, ինչպէս են Բանին հօր, և Աչքըն ծով Մեղեդիները. ևն, նաև պատարագի արարողութեան մեծ մասը որք Ա.Կ. եղանակի ընթացք ունենալով՝ Իկորճ կիսվար

և Վերնախաղ կիսվեր կը գործածեն, երբեմն Ներքնախաղ և երբեմն ևս փուշ կըվերջացնեն. տեսակ մի ԸԿ եղանակ ևս կայ՝ որ տեղափոխուած Գ.Ձ. էջելով կանէ իւր ընթացքը, այս կարգէն են Սրբասացութիւնքը, Նու զատոյքը ևն. որք փոխանակ Ներքնախաղ վերջացնելոյ՝ շատ ժամանակ փուշ կըվերջացնեն:

---

Թ.

---

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ.

---

Երաժշտութեան մէջի ամենամեծ գեղեցկութիւնը փոփոխութիւնն է, այս ըսկզբամբ է որ ձայները հնչելու զանազան ձևեր հնարուած են:

Ընդհարու—մն կըսուին այն փոքրիկ ձայնանիշներն՝ որք երբեմն հաճոյականութեան համար, եղանակներու մէջ մեծ ձայնանիշներու առաջ, ետքը, և վրայ կդրուին, ձայնը նոցա վերայ թեթև կերպով շեշտելով:

Երբ առաջ դրուած լինին, հետևեալ մեծ ձայնանիշին վերայ կզարնուի, ինչպէս  կերգուի այսպէս  կերգուի այսպէս,  ևն: Երբ ետքը դրուած լինին, նա-

խըն՛թաց մեծ ձայնանիշին հետ կերգուին այսպէս․  են։ Իսկ ասոնք կերգուին այսպէս  ․ Եթէ որ և իջէ մի ձայնանիշի վերայ դրուին, նոյն ձայնին վրայ կդարնուին, և այս տեսակ ընդհարումներու համար կգործածուին նոյն ձայներէն մէկ աստիճան վեր եղող ձայները  են։

Այս նշանը  որ Կապ կըսուի՝ 2—3—4— են ձայնանիշներու և կամ մէկ քանի Թաղխումներու վրայ դրուելով, կցուցանէ թէ նոյն ձայնանիշները կամ նոյն Թաղխումները՝ մէկը միւսին յաջորդաբար կապելու կամ զանոնք մէկմէկէ սահուն հնչումով երգելու է՝ ինչպէս 

 են։ 

 են։

Այս նշանը՝  որ Ընդանէլ կըսուի, կցըցունէ թէ մի և նոյն աստիճանի վերայ գտնուած երկու միօրինակ ձայնանիշներ մէկ ձայնով հնչելու է, որուն Թը չեկրկնուիր։

Ընդունէլը ընդհանրապէս Բաղխման վերջի ժամանակէն սկսելով հետեւեալ Բաղխման Ա. ժամանակին վրայ գտնուած միօրինակ ձայնանիշին վրայ կդրուի, ինչպէս,

 և լն.

կամ  և լն։

Այս տեսակները առանց Ընդունէլին այսպէս ալ կգրուին եթէ չափը լրացած չըլինի, ինչպէս  կամ   փոխանակ գրելու , բայց ինչպէս ըսինք՝ եթէ չափը լրացած չըլինի։

Այս նշանը  Ներքնաբամ կըսուի, որ երբեմն ձայնանիշներուն վրայ դրուելով, իւր սովորական չափէն աւելի երկարել կը յայտնէ, եթէ չափը լրացած լինի, ինչպէս,

 և լն։

Վերադարձ կասուին այս նշանները  , որք եղանակի հատուածներու մէջ գործածուելով, կցըցունեն թէ՝ իւրեանց գրուած տեղէն սկսելով այն հատուածընոքէն կրկնելու է մինչև վերջակէտը։

Այս նշանը ։ որ Վերջակէտ կըկոչուի՝ եղանակաց վերջը կգործածուի։

Շատ անգամ Վերադարձ նշաններուն մէջ այս երկու նշաններն ևս կգործածուին

⌜ 1 ⌝ ⌜ 2 ⌝

և կըկոչուին առաջին Անգամ և երկրորդ Անգամ, որք եղանակաց կրկնումներու մէջ գործածուելով, եղանակին սկիզբէն կըսկսի՝ մինչև առաջին Անգամ նշանակած տեղը կըգայ, և նորէն կրկնելով եղանակը առանց Առաջին Անգամ երգելու՝ Երկրորդ Անգամը կերգէ։



Այս նշանը ՛, որ Խաղ կասուի, ո՛ր ձայնին վերայ որ դրուի՝ նոյն ձայնը մեղմ կերպով խաղացունելու է։

Երբոր խաղը Կէտի կամ Զոյգ-կէտի տևողութեամբ գրուած մի ձայնանիշի վերայ դրուի, և նորա բաղխումն լինի Սուր-տուր, Միջակ, միշտ մէկ կէտի տևողութեամբ կերգուի, իսկ եթէ չափաւոր կամ ծանր՝ նորա կիսով չափ։

# ԳԼՈՒԽ Գ․

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆԻՑ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ։

Մի ձայն հանելոյ կերպէն զանազան զգացումներ կրնայ յայտնուիլ, ուստի շատ հարկաւոր է միտ դնել այն նշաններուն՝ որք ձայնանիշներու վերայ կդրուին, այս զանազանութիւնները ցուցանելոյ համար։

Մէղ՜ կըցուցանէ թէ՝ ձայնին սովորական զօրութեամբն երգելու է, որոյ համառօտութիւնն է Մղ ։

Ո–ծգէն՝ որ սովորականէն ամուր ձայնով երգելու է, որոյ համառօտութիւնն է ո–ծ։

Շ՜ատ մէղ՜ կամ՝ չըչէն մէղ՜ համառօտութիւնն է շ. մ կամ չ. մ կամ մ. մ։

Շ՜ատ ո–ծգէնի համառօտութիւնն է շ. ո–ծ։

Երգելոյ ատեն ձայնը հետզհետէ զօրացնելոյ կամ հետզհետէ նուազացնելոյ համար երկու նշան կգործածուին, որոց կասուի զօրացուցիչ և մեղմացուցիչ, որոց առաջինն է այսպէս <, որ կցուցանէ թէ մեղմ ձայնէն սկսելով հետզհետէ զօրացնելու է, և Բը այսպէս >, որ կցուցանէ թէ ամուր սկսելու և հետզհետէ մեղմացնելու է։

Երբեմն կպատահի որ՝ երկուքն եւս մեկէն գրուած կլինին < >, որ կցուցանէ թէ՝ մեղմ ձայնէն սկսելով ուժովցնել և հետզհետէ մեղմացնել պէտք է։

---

Ե․

---

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ։

Երբ որ երկու կամ աւելի զուգընթաց ձայներ մէկ տեղ հնչուած ատեն լսողութեան հաճելի տպաւորութիւն կանեն, այն ձայները Ներդաշնակ կկոչուին։

Երաժշտութիւնը մարդուս զգացմունքը կամ մտքին վիճակը ցուցանելոյ զօրութիւնը մեծապէս կաճի ձայներու ներդաշնակ շարակարգութեամբ։

Մեր եկեղեցական երաժշտութեան մէջ Եւրոպական ներդաշնակութեան կանոնը չի գործածուիր, և մեր եղանակները ընդունակ չեն Եւրոպական եղանակաց նման զուգընթաց ձայներ յառաջ բերելոյ, բաց ի մէկ քանի եղանակներէ, զորս դիպուածը Եւրոպական եղանակաց մօտեցուցած է, և այն եւս ոչ թէ չորս կամ աւելի ձայներով՝ այլ միմիայն երկու զուգընթաց

ձայներով երգել, և երբեմն ևս նորա ամեն մէկ վանկերը և եղանակին դիմող ձայները և չնչառութիւնը, իբրև ներդաշնակութիւն գործածել, և կամ մի և նոյն եղանակը իրարմէ ութնեակ մի բարձր կամ ցած՝ ի միասին երգել:

Ուստի տարբեր ձայներով ի միասին երգել անկարելի է, և եթէ յարմարեցնել ևս ուզեմք՝ ականջի ախորժելի չի գար, սորա պատճառը եկեղեցական երգոց ելևէջի ընթացքին և միջոցներուն Եւրոպեանէն ունեցած խիստ մեծ տարբերութիւնն է:

Մեր ձայնագրութեան մէջ հետևեալ ձայները կան՝ զորս միջին հաշուով կրնամք բաժանել այսպէս:

Ա.  արական ցած ձայն:

Բ.  արական բարձր ձայն:

Գ.  իգական կամ տղայի ցած ձայն:

Դ.  իգական կամ տղայի բարձր ձայն:

## Բ.

### Ձայնաւորներն :

Ինչպէս ըսինք՝ մի եղանակի դիմած, վերջացուցած և կամ ուրիշ գլխաւոր ձայները իբրև ներդաշնակութիւն կրնայ գործածուիլ ձայնաւորութեան մէջ, իսկ ի միասին երգելոյ համար՝ մին ցածէն, իսկ միւսը եթէ կրնայ՝ բարձրէն երգել:

ԱՁԻԱ ձայնաւորութիւն է [sign] Բ ըբ [sign]

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դարձուածքի | ,, | ~ | [sign] | երբեմն | [sign] |
| ԱԿ ի | ,, | [sign] | [sign] | ,, | [sign] |
| Դարձուածքի | ,, | ~ | [sign] | ,, | |
| ԲՁ ի | ,, | ~ | [sign] | ,, | |
| Դարձուածքի | ,, | [sign] | ~ | ,, | [sign] |
| ԲԿ ի | ,, | [sign] | ~ | ,, | |
| ԳՁ ի | ,, | ~ | [sign] | ,, | [sign] |
| Դարձուածքի | ,, | [sign] | [sign] | ,, | ~ |
| ԳԿ ի | ,, | ~ | [sign] | ,, | |
| Դարձուածքի | ,, | ~ | [sign] | ,, | |
| ԴՁ ի | ,, | [sign] | ~ | ,, | |
| Ա. դարձուածքի | ,, | [sign] | [sign] | ,, | |

| | | | |
|---|---|---|---|
| Բ. ձայնաւութիւնն է | | | երբեմն |
| Գ. | „ | | „ |
| Գ.Կ. ի | „ | | „ |
| Ը. դարձուածքի | „ | | „ |
| Բ. | „ | | „ |



ՎԵՐՋ.